ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 2-ին, կիրակի: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 9-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբեղա Գալստյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը Քրիստոսի պայծառակերպության հոգևոր ու բարոյական մեծ նշանակության մասին, ինչպես մարդկային ազգի պատմության, այնպես էլ յուրաքանչյուր հավատացյալի կյանքի մեջ:

* * *

Հուլիսի 10-ին, երկուշաբթի.—Հիշատակ մեռելոց:

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան արարողություն «Վասն հանգչելոց»:

* * *

Հուլիսի 11-ին, երեքշաբթի: Այսօր երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանում գումարվում է Գերագույն Հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Հուլիսի 16-ին, կիրակի: Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես քհն. Մարուքյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 23-ին, կիրակի: Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի միաբան, դիվանապետ և ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Շահե ե-

պիսկոպոս Անեմյանը։ Նա, մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, Վեհարանում աջահանդիպությամբ ստանում է Հայոց Հայրապետի օրհնությունը։

* * *

Հուլիսի 30-ին, կիրակի։ Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող, ԱՄՆ-ի Սպրինգֆիլտ քաղաքի հայոց հոգևոր հովիվ տ. Ներսես քհն. Ճեպեջյանը և քարոզում Մայր Աթոռ ս. Էջմիածնից և մայր հայրենիքից ստացած իր տպավորությունների մասին, հաղորդելով նաև իր համայնքի ողջույնները Մայր Աթոռի միաբանությանը։

Հավարտ ս. պատարագի ս. հաղորդություն են ստանում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող ԱՄՆ-ի հայոց եկեղեցու Երիտասարդաց կազմակերպության 20—25 անդամ-անդամուհիներ, որոնք տ. Ներսես քհն. Ճեպեջյանի գլխավորությամբ ժամանել էին Մայր Աթոռ և հայրենիք։

* * *

Նույն օրը տ. Շահե եպս. Անեմյանը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և վերադառնում իր պաշտոնատեղին՝ Երուսաղեմ, Սրբոց Հակոբյանց վանք։